04 AUG 2010

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք։

# ՎԵԴՈՒ ՇՐՋԱՆԻ ԲԱՄԲԱԿԻ 1937 ԹՎԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈ-ԿԱՆՈՆՆԵՐԸ

633
Վ-39

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԳՈՐԾԿՈՄԻ ՀՈՂԲԱԺՆԻ 1937

0 9 AUG 2013
18564
633
Վ-39
Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-ССР им. А. Мясникова
2102
38

# ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄ

## ՎԵԴԻԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ԲԱՄԲԱԿԻ ԱԳՐՈ-ԿԱՆՈՆՆԵՐԸ ՃՇԳՐԻՏ ԿԵՐՊՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բամբակի բերքատվությունը բարձրացնել ու նպատակով բամբակի մշակությունը 1937 թ. լավորակ և ժամանակին կատարելու համար, շրջանային գործադիր կոմիտեն ՎՈՐՈՇՈՒՄ Ե՝

1. Առաջարկել բոլոր բամբակացան կոլլեկտիվ ու անհատական տնտեսություններին 1937 թ. պարտադիր կերպով բամբակը մշակել գործկոմի կողմից հաստատված «բամբակի մշակության ագրո-կանոններ»-ի համաձայն,

2. ՄՏ Կայանի ագրոնոմներին, գյուղխորհուրդներին և կոլխոզվարչություններին, և մասսայականացնել կոլխոզի ընդհանուր հասարակական ժողովներում և առանձին բրիգադներում։

3. Հողբաժնին գյուղխորհուրդներին՝ խիստ հսկողություն սահմանել ագրո-կանոնները ճշգրիտ և բարձր վորակով կատարելուն.

4. Ագրո-կանոնների վորեվ է կետը խախտողներին յենթարկե պատասխանատվության վարչական կարգով տուգանքի մինչև 50 ռուբլի, կամ հարկադիր աշխատանքի մինչև 10 որ։

5. Չարամտորեն խախտողներին յենթարկել դատական պատասխանատվության։

6. Գյուղ խորհուրդների վորոշումների դեմ կարելի յե բողոքել Շրջ-գործկոմին 7 որվա ընթացքում։

7. Սույն վորոշումը ուժի մեջ ե մինչև ս. թ. դեկտեմբերի 31-ը։

8. Առաջարկել Թերթի խմբագրությանը սույն վորոշում ագրոկանոնների հետ միասին հրատարակել Թուրքերեն և հայերեն լեզուներով բրոշուրի ձևով վոչ ուշ մինչև սույն թվի մարտի 18 ը. 400 որինակ։

ԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ — ԱԲԴՈՒԼԱՅԵՎ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ — Մ. ԲԱՇԻՐՈՎ

## 1. ԴԱՇՏԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Բամբակի բերքատվության բարձրացման հիմնական պայմաններից մեկն հանդիսանում է հողի խնամքով մշակումը և նախքան ցանքը, դաշտի նախապատրաստումը, վորի համար անհրաժեշտ է՝

1. Բամբակի տակ դրվելիք հողամասերը մաքրել ծառերի արմատներից, հավասարեցնել թմբերը և վարել միջնակները. վերոհիշյալ աշխատանքները կատարելուց հետո չհարթված մակերես ունեցող հողամասերը հարթել, լցնելով փոսերը, հին առուները, խորդ ու բորդությունները։

2. Դաշտից հավաքել և հեռացնել բամբակի ցողուններն արմատներով, ինչպես նաև ցողունների և մոլախոտերի այն մնացորդները, վորոնք վարի ժամանակ դուրս են բերվում հողի յերեսը։

3. Հավաքել և հեռացնել դաշտում յեղած բոլոր քարերը։

4. Յերբ դաշտը, տեղ, տեղ, թալաններով վարակված է ղանդուրղանով և այլ կոճղարմատներով, մինչև վարի սկսելը, նման տեղերը մաքրել քլթմեններով, բահերով և այլն) կոճղարմատներից, ղանդուրղանից, հեռացնել դաշտից և այրել։ Մաքրելուց հետո միայն դաշտը վարել, վորպեսզի մոլախոտերը վարի ժամանակ գութանի միջոցով տարածվի դաշտում։

## 2. ԳԱՐՆԱՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Գարնանավարը սկսել հողի հասունացման ժամանակ յերբ քեշի յե լեկել։

2. Վարի քանակը և խորությունը վորոշվում է ամեն մի դեպքում հողային պայմաններով և ստոր-յերկրյա ջրերի բարձրությամբ— ըստվորում՝

ա) Մեկ վար կատարվում է բոլոր այն խոնավ հողերում, վորտեղ վարը հնարավոր է 10-12 որ մինչև ցանքը, վարի խորությունը այդպիսի հողերում կատարել վոչ պակաս 22 սանտիմետր։

բ) Բոլոր մյուս հողերում, վարը կատարել 2 անգամից վոչ պակաս, իսկ տյնախի թեթև հողերում, ինչպիսին է Արաքսի ափի ավազոտ (ղում) հողերը, և մյուս նման տիպի հողերում վարը կատարել յերեք անգամ

գ) Առաջին վարը կատարել 25—26 սանտիմետր խորությայր, յերկրորդը 24—25 սմ. և յերրորդը՝ 22—24 սմ.։

դ) Առաջին վարից մինչև յերկրորդ վարը և յերկրորդ վարից մինչև յերրորդ վարի ժամանակամիջոցը, պետք է լինի վոչ պակաս քան 15 որ։ Նպատակահարմար վերջին վարը կատարել չիզելով։

3. Ամեն մի վարի և փոցխին զուգընթաց, տրակտորի հետևից ձեռնարկել արմատների և մոլախոտերի հավաքում։

4. Յերբ հողամասի ձևը թույլ է տալիս, վարերը կատարել նախորդ վարերի հակառակ ուղղությամբ։

5. Կցվող գործիքներն այնպես դասավորել, վոր ապահովի միատեսակ հավասար խորություն ունեցող վարը։

6. Վարը կատարել այնպես, վորպեսզի ամբողջ դաշտը վարվի հավասարապես առանց խամ տեղեր և չվարած անկյուններ թողնելու։

7. Յուրաքանչյուր վարից հետո կատարել փոցխում, վարերին հակառակ ուղղությամբ։

8. Արաթի կրկնավարը կատարել, անտեսության մեջ յեղած բոլոր տեսակի գործիքներով. կուլտիվատոր, բազմախոփ գութաններով 10—12 սանտի խորությամբ, առանց առ շուռ տալու. ծանր ավելի ուշ քեշի յեկող հողերում, վորոնք տալիս են կոշտեր, կրկնավարը կատարել 8—10 սանտի խորությամբ։

9. Ուղիղ շարքեր ստանալու համար մարկոսը կատարել լարով և մարգերի միջի հողը հավասարեցնել։

10. Մարգերի լայնությունը սահմանել 3—6 շարքացանքսի համար։

11. Արաթ կատարվող հողամասերի մարգերի պատրաստումը կատարել նախքան արտի ջուրը։

## 3. ԱՐԱԹ ՅԵՎ ԾԼԱՋՈՒՐ

1. Գարնանային արաթ կատարել ավելի հարթ ռելեֆ ունեցող հողամասում. առաջին հերթին ծանր, ուժեղ խոնավունակ և վոր ամենից գլխավորն է ջրելուց հետո դանդաղ չորացող հողամասերում։ Արաթը կատարել այնպես, վոր ջուրը մաքսիմալ չափով հավասարապես տարածվի դաշտի ամբողջ մակերևույթի վրա և արագ չհոսի դաշտի վրայից։

2. Բողահողերի վրա արաթ չը կատարել։

3. Ծլաջուր կատարել փոքր թեքությամբ, թեք և քիչ խոնավունակ և ջրելուց հետո արագ չորացող հողամասերում։

4. Գարնան արաթի ժամկետը պետք է սահմանել ըստ կոլտնտեսության առանձին մասսիվների, հողակտորների և ոռոգման սիստեմների, նկատի ունենալով այն հանգամանքը, թե տվյալ հողամասը քանի օրից հետո կարող է արաթի գալ։

Այս տեսակետից արաթը կատարել այն հաշվով, վոր նա քեշի գա ցանքսի ժամանակ. ինկատի ունենալով, վոր ծանր կավային հողերը չորանում են ավելի դանդաղ 8-15 օրում, իսկ թեթև հողերը 4-7 օրում։

5. Յերբ արաթ կատարված հողամասը միաժամանակ համասար արաթի չի գալիս պետք է առանձին մասերում, քեշի յեկատեղերում փոցխել, կամ տափանել չսպասել ամբողջ դաշտի քեշի գալուն։

Ընդհանրապես արաթ կատարված հողամասերի քեշը պահպանելու նպատակով, փոցխել կամ տափանել, նախ քան կրկնավարը կարող է ուշանալ և քեշը կարող է անցնել։

6. Ցանքսը ակոսներով կատարելու դեպքում, յեթե տվյալ հողամասի վրա կատարվելու յե ակոսային ջուր, մարգ չգցել հետագա ոռոգումները ակոսային ձևով կատարելու համար։

7. Արաթից հետո, յեթե հողը զանազան պատճառներով չորանում է, քեշը անցնում է, այդ դեպքում կրկնավարի արաթ թույլատրվում, յեթե չի ուշացնի ցանքսը ժամանակին կատարելուն, հակառակ դեպքում կատարել ծլաջուր (սապսավար)

8. Թե ծլաջրի և թե արաթի ժամկետին, մարգերի լայնությունը դիֆերենցիացիայի յենթարկել ըստ առանձին հողամասերի իսկ տրակտորային մշակման համար հողամասերի մարգերի լայնությունը հարմարեցնել տրակտորային կուլտիվացիային։

## 4. ՍԵՐՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՑԱՆՔՍԻ ՀԱՄԱՐ

1. Բամբակի ցանքսը կատարել լինտերովկայի յենթարկված, զտված և ախտահանված սերմացուով։

2. Սերմի տեսակավոր մաքրությունը բարձրացնելու նպատակով, պետք է սերմերը ձեռքով զտել կարաչիգիգից, անպետք փուչ և բոստանիկական այլատեսակ սերմերից։

3. Արաթի դեպքում, նախքան ցանքը սերմերը թրջել հասոց ջրի մեջ, մինչև սերմերի լրիվ ուռչելը, այն հաշվով, վոր սերմերը շարքացանի մեջ չկոտրվեն։

Հասոց ջուր չլինելու դեպքում, կարելի յե թրջել տակառների մեջ կամ փոսերի, յուրաքանչյուր դեպքում վերցնելով թարմ ջուր։

Սերմերը թրջել պարկերում, լցնելով պարկի 1-3 րդ տարողությունը և լրիվ թաղել ջրի մեջ։

4. Ցանքի ժամանակ շարքացանի անխափան աշխատելու համար, սերմերը խառնել և նախքան շարքացանի արկղը լցնելը ձեռքով տրորել, վորպեսզի սերմերը իրարից անջատվեն։

5. Ծլած սերմերով ցանքս չկատարել։

6. Բամբակի ցանքը կատարել 85 տոկոսանոց և բարձր ծլունակություն ունեցող սերմերով։ 85 տոկոսից ցածր ծլունակություն ունեցող, բայց վոչ պակաս 75 տոկոսից, հնդի յուրաքանչյուր տոկոսի համար, սերմի քանակին ավելացնել մեկ կիլոգրամ։

## 5. ՑԱՆՔՍԻ ԺԱՄԿԵՏՆ ՈՒ ՆՈՐՄԱՆ

1. Բամբակի ցանքսը կատարել ապրիլի 20-ից մինչև մարտի 5 ը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — Բամբակի ցանքսի սկիզբը ճշտվում է Հողբաժնի և ՄՏ Կայանի կողմից, յելնելով հողի ջերմությունից։

2. Ծլաջրի դեպքում ցանքսի ժամկետը հաշվվում է այն օրվանից, յերբ բամբակը ջրվում է։

3. Ցանքսը պետք է սկսել առաջին հերթին թեթև և արագ չորացող հողերում և վերջին հերթին ծանր հողերում։

4. Մեկ հեկտարի վրա ցանվող սերմի քանակը սահմանել 80 կիլոգրամ։

## 6. ՑԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱՆ

1. Ցանքի խորությունը վորոշվում է ըստ առանձին հողակտորների, յելնելով հողի խոնավությունից, ֆիզիկական հատկությունից և ցանքի ժամկետից։

Արաթի դեպքում ցանքը կատարել 4-5 սանտ ծլաջրի դեպքում 2-3 սանտիմետր խորությամբ։

2. Նախացանքային աշխատանքներին պետք է հաջորդի անմիջապես ցանքի աշխատանքները- համանավանդ արաթի դեպքում։

3. Յուրաքանչյուր ցանքի ժամանակ պետք է կանոնավորել

շարքացանը, ցանվող սերմի քանակն ու խորությունը։

4. Հողամասերի ուղիղ շարքեր ունենալու նպատակով, կուլտիվացիան անխափան աշխատելու համար ցանքն անպայման կատարել մարկյորով։

4. Արգելվում է ցանքը կատարել՝

ա) ցեխ հողերում.

բ) չորացած հողերում արաթի դեպքում.

գ) առանց մարկյորի.

դ) կոշտեր ունեցող հողամասերում.

ե) արաթի դեպքում չոր սերմերով.

զ) գիշեր ժամանակ.

է) չզտված և չախտահանված սերմերով։

6 Խստիվ կերպով արգելվում է բամբակի դաշտում այլ կուլտուրաներ ցանելը։

7. Ցանքը կատարել փորձված ցանողների միջոցով։

8. Ցանողներն իրենց հետ պետք է անպայման ունենան շարքացանի համար անհրաժեշտ քանակությամբ շարքացանի մասեր, բոլտեր, գայկաներ բալանիներ և այլն։

9. Մինչև դաշտի վերջը լրիվ չցանված շարքերը, կամ շարքացանի կողմից թողնված, չցանված տարածությունները լրացնելու նպատակով, շարքացանի հետևից նշանակել հատուկ մարդ։

## 7. ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆՔԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ

Բոլոր տեսակի հողերում միջշարքային տարածությունը, տրակտորային ցանքի համար և խոնավ հողերում ձիու շարքացանի դեպքում, միջ-շարքային տարածությունը սահմանել 70 սանտիմետր։

2. Մյուս բոլոր տեսակի հողերում, ձիու շարքացանի դեպքում 0246 սորտի համար, միջշարքային տարածությունը սահմանել 65 սանտիմետր։

3. Մեկ հեկտարի վրա սահմանել հետևյալ քանակությամբ բամբակի բույս, բնում յերկուական բույս ունենալու դեպքում։

Ա. Նո. 0246 տեսակը խոնավ հողերում.—

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ա) միջշարքային | տարածությունը | 70 | սմ. | միջ-բնայինը՝ | 40 | սմ. | 71.000 |
| բ) | » | 70 | » | » | 30 | » | 94.000 |
| գ) | » | 65 | » | » | 35 | » | 87,000 |
| դ) | » | 65 | » | » | 30 | » | 101.000 |



Բ. Նո. 0246 տեսակը այլ հողերում.—

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ա) Միջշարքային | տարածություն | 70 | սմ. | միջ-բնայինը՝ | 30 | սմ | 94.000 |
| բ) | » | 65 | » | » | 25 | » | 12.000 |
| գ) | » | 65 | » | » | 20 | » | 153.000 |
| դ) | » | 60 | » | » | 20 | » | 166.000 |

Նշված բամբակենու նորմալ խտությունը տարբեր հողերում մեկ հեկտարի վրա, համարել բամբակենու նորմալ խտությունը և ամեն մի դեպքում նշված քանակից պակաս լինելուց համարվում է փաստացի տարածության իջեցում։

## 8. ԾԼՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՅԵՎ ԿՐԿՆԱՑԱՆ

Ցանված դաշտերը ստուգելու համար, վորոշակի որեն չնշանակել, կամ սահմանել այլ ցանքսից հետ պարբերաբար ստուգել դաշտերը իր ժամանակին պարզելու սերմերի ծլման ընթացքը և ծիլերի դրությունը։

2. Յեթե արաթ կատարված ցանքից հետո պարզվեց, վոր խոնավության բացակայության պատճառով բամբակի դաշտերում ծիլերը 40 տոկոսով բացակայում են, կատարել կրկնացան, իսկ ծլաջրի դեպքում, յերբ պարզվի, վոր նորմալ խտությամբ ցանված, սակայն չորացած բամբակի դաշտում ծիլերը 40 տոկոսով բացակայում են, անմիջապես պետք է կրկնակի ջրել. իսկ յեթե պարզվի, վոր ծիլերը չեն բուսել, սերմերը խորը ցանված լինելու պատճառով, կատարել կրկնացան։

3. Յերբ ամբողջ շարքերը բաց են մնացել, ցանողի անուշադրության պատճառով, անհրաժեշտ է այդ շարքերով կուլտիվատորի միջոցով բաց անել ակոսներ, ակոսներով ջուր բաց թողնել, քեշի գալու ժամանակ խոնավացած թմբերի վրա, թրջված գծից քիչ վերև, ցանել բնացան, թրջած սերմերով յուրաքանչյուր բնում ցանելով 4-5 սերմ։

4. Այն հողամասերի վրա, վորոնք պահանջում են մասնակի վերանորոգում, անհրաժեշտ է քեշի դեպքում թրջած սերմերով կատարել բնացան։

5. Կրկնացանի յենթակա յեն նաև այն հողամասերը, վորոնց վրա ցանված միջ-շարքային տարածությունները 10 սանտիմե-

տը և ավելի լայն են վերցրված, քան տվյալ գյուղի կամ սառնայի համար սահմանված միջ-շարքային տարածությունները։

6. Երկնացանի ժամանակ, լայն կերպով կատարել բամբակի սածիլումը. սածիլի համար օգտագործել բամբակի խիտ տեղերի բույսերից, վորոնք յենթակա յեն նոսրացման։

7. Երկնացանի և վերանորոգման ժամկետը սահմանվում է մինչև 20-ը մայիսի։

## 9. ՊԱՅՔԱՐ ԿԵՂԵՎԻ ԴԵՄ

1, Ծլաջրի դեպքում, քերը գալու ժամանակ, դաշտը մարգերի յերկարությամբ փոցխել զիգզագ փոցխերով կամ տափանել, ծլաջրի հետեվանքով գոյացած կեղևը ջարդելու և ծլած մոլախոտերը վոչնչացնելու համար։

2. Արաթ կատարված հողամասերում, անձրևներից հետո, կեղևի առաջացումը կանխելու նպատակով, փոցխել մեկ օրվա ընթացքում։ Փոցխը կատարել առանց վախենալու նույնիսկ այն ժամանակ, յերբ բամբակի դաշտում կան վորոշ քանակությամբ բամբակի ծիլեր միայն վերջին դեպքում արգելվում է տափանի գործածումը։

## 10. ՆՈՍՐԱՑՈՒՄ

1. Նոսրացումը կատարել յերկու ժամկետում, ըստ վորում՝

ա) առաջին նոսրացումը կատարել յերբ յերևում են մասսայական ծիլերը (շաքիլային տերևների ժամանակ) թողնելով յուրաքանչյուր բնում 2—3 բույս. բունը բնից հեռավորությունը թողնել կիսով չափ 7-րդ գլխում նախատեսնված միջբնային խտության։

բ) Յերկրորդ վերջնական նոսրացումը կատարել 2—3 իսկական տերևները յերևալուց հետո, թողնելով յուրաքանչյուր բնում 2 ական բույս։ 2-րդ նոսրացման ժամացակ բունը բնից թողնել նախատեսված վերջնական հեռավորությունը, վորը սահմանվում է տվյալ կոլխոզի, սառնաշի, կամ հողամասի համար։

2. Նոսր ցանքի դեպքում, առաջին և յերկրորդ նոսրացումների ժամանակ նույնպես կատարել բամբակի սածիլում։

3. Նոսրացումը կատարել կուլտիվացիայից և քաղհանից անմիջապես հետո, իբրև առանձին աշխատանք. նոսրացումը պետք է կատարել բացառապես ձեռքով։

4. Թե առաջին և թե յերկրորդ նոսրացումների ժամանակ, բրիգադաների ներսում



կազմած օղակներից, առանձնացնել փորձված կոլտնտեսականներ, վորոնք քաղհանից անկախ նոսրացումը կատարում են իբրև առանձին աշխատանք. նոսրացման ժամանակ բնիրում թողնել ամենից առողջ և լավ զարգացած բույսերը։

## 11. ԱՄԱՌԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄ

1. Ամբողջ վեգետացիայի ընթացքում բամբակի դաշտերը պահել բացարձակապես փուխր դրության մեջ և ամբողջապես զերծ մոլախոտերից։

2. Առաջին քաղհանը և կուլտիվացիան կատարել մասսայական ծիլերը յերեվալուց հետո 10-12 սանտիմետր խորությամբ. 2-րդ՝ հետագա հերթական մշակումները, կատարել յուրաքանչյուր 12-14 որ հետո, 12-14 սմ. խորությամբ. իսկ տրակտորայինը 15—16 սանտիմետր։

3. Կուլտիվացիայի քանակը սահմանվում է վոչ պակաս 5—6 անգամ։

4. Յերբ բամբակենու շարքերի բույսերը խառնվում են միմյանց և հնարավոր չի կուլտիվացիա անցկացնելու, այս դեպքում կատարել ձեռքով քոլ-քաշ, իսկ դաշտը ղանդուրդանով և այլ կոճղարմատներով վարագած լինելու դեպքում, մոլախոտերը կտրել շեղպիկներով։

5. Քաղհանը և կուլտիվացիան կատարել միայն հողի հասունացման ժամանակ (քեշի յեկած)։

6. Բամբակի ամբողջ դաշտերում մշակումն ամբողջ վեգետացիայի ընթացքում կատարել վոչ պակաս 5- 6 անգամ վեգետացիայի ընթացքում, ղեկավարվելով մոտավորապես հետևյալ ժամկետներով՝

| | | | |
|---|---|---|---|
| Առաջին | մշակումը | ավարտել | 25-ին մայիսի. |
| յերկրորդը | » | » | 10-ին հունիսի. |
| յերրորդը | » | » | 30 ին հունիսի. |
| չորրորդը | » | » | 10-ին հուլիսի. |
| հինգերորդը | » | » | 26-ին հուլիսի. |
| վեցերորդը | » | » | 10 ին օգոստոսի |

7. Մշակում ասելով պետք է հասկանալ ձիով կամ տրակտորային կուլտիվացիան և միջ-բնային տարածությունների ձեռքի քաղհան։ Իրարից անջատ և տարբեր ժամկետներում

կատարած աշխատանքները չի համարվում մշակումն ավարտած։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — Յեթե դաշտը բացառիկ դեպքում վարակված է պատուտակով, նախ ձեռքով քաղհան կատարել միջշարքերում հետո քաղհանել տրակտորային կուլտիվատորով կամ ձիով։ Մնացած բոլոր դեպքերում, նախ կատարել միջ-շարքային տարածությունների մշակումը տրակտորային կամ ձիու կուլտիվատորի միջոցով և հետո ձեռքի քաղհանը քեթմեններով։

8. Մշակումների ժամանակ ջրատար առուների, փոսերի և հարևան խամ տարածությունների վրա յեղած մոլախոտերը քաղել հերթական մշակման հետ մինչև նրանց ծաղկելը։

9. Յուրաքանչյուր վեգետացիոն ջրից, կամ անձրևներից հետո, պետք է միջ շարքային տարածությունները փխրեցնել կուլտիվատորներով և քեթմեններով, անկախ նրանից մոլախոտեր կան թե չէ։

10. Կուլտիվատորի բոլոր կըտրող դանակները և փխրեցնող թաթերը, ինչպես նաև քեթմենները ամբողջ մշակման ընթացքում պետք է լինեն սրված։

11. Բոլոր դեպքերում կուլտիվացիան կատարել թաթերի հետևյալ դասավորությամբ՝ առջևից փխրեցնող թաթերը, կողքերից կտրող դանակները, հետևից սագաձև կամ փխրեցնող թաթը։

## 12. ՎԵԳԵՏԱՑԻՈՆ ՋՐԵՐ

1. Վեգետացիոն ջրերը անցկացնելու ժամանակ ղեկավարվել հետևյալով՝ վոր վաղ հաճախակի և քիչ նորմաներով ջրելը, ուժեղացնում են բամբակենու աճեցողությունը և բարձրացնում նրա բերքատվությունը։

2. Վեգետացիոն ջրերի ժամկետը և նորման վորոշվում են կոլխոզում, յելնելով հողային պայմաններից, ստորերկրյա ջըրերի բարձրությունից, հողի դիրքից և ցանքի ժամկետից։

3. Վեգետացիոն ջրերը տալիս ղեկավարվել հետևյալ հիմունքներով՝

ա) Թույլ հողերը, վորոնք ունեն ավազոտ (ղրաջ) յենթահող, ինչպես նաև միջթեքություն ունեցող հողերը, ջրել հաճախակի։ Առաջին վեգետացիոն ջուրը տալ ավելի շուտ, իսկ վերջին ջուրն ավելի ուշ։

բ) Ծանր, ուժեղ խոնավունակ և քիչ թեքություն ունեցող հողամասերում, բամբակը ջրել վոչ հաճախակի, ջրելն սկսել ավելի ուշ և ավարտել շուտ, ավելացնելով ջրի նորմաները։



գ) Այն հողերը, վորտեղ ստորերկրյա ջրերը բավականին բարձր են և խոնավությունը հասնում է բամբակենու արմատների տարածման կետին, ջուրը տալու թիվը պետք է պակասեցնել։

դ) Ջրելիս առաջնությունը տալ պարարտացված բամբակենուն և ջրել առաջին հերթին։

յե) Վեգետացիոն ջրերը տալ մոլախոտերից ազատված հողամասերին։

4. Բամբակենու վեգետացիոն առաջին ջուրը տալ ծլելուց 20-25 որ հետո, բացառությամբ այն հողամասերի, վորոնց ստորերկրյա ջրերը բարձր են գըտնվում, իսկ հետագա ջրերը տալ ըստ բույսի պահանջի, ըստ վորում մինչև ծաղկելը տալ 1-2 ջուր. հասունացման շրջանում յելնելով օդերևույթաբանական պայմաններից, տալ 1-2 ջուր։

Ծաղկման և հասունացման շրջանում ջրել գլխավորապես գիշերները։

5. Ակոսային ջուրը կատարել բոլոր հողերում, բացառությամբ ջրաթափանցիկ, թեքություն ունեցող և ավազային հողերից։

Ակոսներում ջուրը բաց թողնել բարակ և դանդաղ հոսանքով։

6. Ջուրը լրիվ ռացիոնալ օգտագործել ու նպատակով, բոլոր գյուղերում սահմանել բամբակենու անընդհատ վոռոգում, գիշեր և ցերեկ։

7. Յերբ չոր և տաք յեղանակի հետևանքով բամբակենին սկսում է չորանալ և անժամանակ բացվում են կնգուղները, կատարել պայմանական ջուր, ավարտելով այսպիսին ջրժամկետից ավելի ուշ։

8, Յերբ ցուրտ և խոնավ յեղանակին բամբակենին զվարթ վիճակում է գտնվում և նկատվում է հասունացման ձգձգում, արագացնել ջրելու ավարտումը։

9. Տեղումների, անձրևների պատճառով չպետք է ձգձգել ջրման ժամկետները։

## 13. ԾԵՐԱՏՈՒՄ

1. Նպատակ ունենալով պակասեցնել ծաղկաթափման տոկոսը և ավելացնելու կնգուղների քաշը, 25-ը հուլիսից մինչև 5 ը օգոստոսի ընկած ժամանակամիջոցում, յերբ բամբակենին ունենում է 8-10 բերքատու ճյուղեր, կատարել ծերատում, նշված ժամկետից և բամբակենու զարգացման տվյալ շրջանից վաղ կամ ուշ ծերատում կատարելը արգելվում է։

## 14. ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

1. Հանքային պարարտանյու-

թերը պետք է տրվեն կոլտնտեսությունների կշռով, պարարտանյութի հետ միասին պետք է տրվի նաև փաստաթուղթ, վորի մեջ ցույց տրված լինի պարարտանյութի տեսակը և նրա մեջ պարունակված սննդանյութի (ազոտի կամ ֆոսֆորի) տոկոսը, վորպեսզի պարարտանյութերի խառնուրդը ճիշտ պատրաստվեն։

2. Վորովհետև ագրո ձեռարկումների կոմպլեքսի կիրառմամբ է ապահովում պարարտանյութերի բարձր էֆեկտիվությունը, ուստի 1936 թ. համեմատությամբ հանքային պարարտանյութերի դոզաները բարձրացնել հետևյալ չափով՝

ա) Այն հողերը, վորտեղ վորոշված եր մաքուր ազոտ 60 կ. տալ 90 կ.
բ) » » » » » » 90 » 120 »
գ) » » » » » ֆոսֆոր 45 » 70 »
դ) » » » » » » 60 » 90 »

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Պարարտացման տախտակը ըստ կոլխոզների կցվում է սույնին։

3) Հանքային պարարտանյութերը օգտագործելիս ղեկավարվել հետևյալ ցուցմունքներով՝

ա) բացի ճահճային հողերից. մնացած բոլոր հողերում ցրտահերկի ժամանակ մտցնել ազոտային պարարտանյութերից միայն ամոնիում սուլֆատը, իսկ ազոտային մյուս պարարտանյութերը լեյնա սելիտրան և ամոնյակային սելիտրան մտցնել հողի մեջ գարնանավարից առաջ, կամ բամբակենու վեգետացիայի ժամանակ։

Ճահճային հողերը պարարտացնել միայն սուպերֆոսֆատով, հաշվելով յուրաքանչյուր հեկտարին 90կիլոգրամ մաքուր ֆոսֆոր։

Ցրտահերկի, գարնանավարի և վեգետացիայի ժամանակ պարարտացնելիս պարարտանյութերը մտցնել հողի մեջ մասամաս, ղեկավարվելով հետևյալ աղյուսակով՝



Ա) Ցրտահերկի ժամանակ պարարտացնելու դեպքում. (կիլոգրամներով).

| № | Պարարտանյութերի ժամկետները | Ազոտ | Ֆոսֆոր | Ազոտ | Ֆոսֆոր | Ազոտ | Ֆոսֆոր | Ազոտ | Ֆոսֆոր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Պարարտանյութի դոզան | 90 | 75 | 120 | 75 | 90 | 90 | 120 | 90 |
| 2 | Մտցնել ցրտահերկի ժամանկ | 60 | 75 | 60 | 75 | 60 | 60 | 60 | 60 |
| 3 | Մտց. գարնանվարի ժամանակ | 30 | — | 30 | — | 30 | 30 | 30 | 30 |
| 4 | Մտց. 1-ին և 2-րդ կուլտիվատ | — | — | 30 | — | — | — | 30 | — |
| 5 | Մտց. բուտոնիզաց. կուլտիվ. | — | — | — | — | — | — | — | — |

բ) Գարնան վարի ժամանակ պարարտացնելու դեպքում (կիլոգրամներով)

| № | Պարարտացման ժամկետները | Ազոտ | Ֆոսֆոր | Ազոտ | Ֆոսֆոր | Ազոտ | Ֆոսֆոր | Ազոտ | Ֆոսֆոր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Պարարտանյութերի դոզան | 90 | 75 | 120 | 75 | 90 | 90 | 120 | 90 |
| 2 | Մտցնել 1-ին գարնանվարի ժամանակ | 60 | 75 | 60 | 75 | 60 | 60 | 60 | 60 |
| 3 | Մտց. 1-ին և 2-րդ կուլտիվացիայի ժամանակ | 30 | — | 30 | — | 30 | 30 | 30 | 30 |
| 4 | Բուտոնիզացիայի ժամանակ | — | — | 30 | — | — | — | 30 | — |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Պարարտանյութի քանակը ցույց է տրված մաքուր ազոտով և ֆոսֆորով։

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս ըստ տեսակների, թե այս կամ այն քանակությամբ պարարտանյութերն ինչ չափով պետք է վերցնել մեկ հեկտարի համար։

| | Պարարտանյութերի անունները | Մաքուր ազոտի կամ ֆոսֆորի պարունակությունը տոկոս. | Մեկ հեկտարի դոզան կիլոգրամներով | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 60 կիլո | 75 կիլո | 90 կիլո | 120 կիլո | 150 կիլո |
| 1 | Սուպերֆոսֆատ | 18,5 | 320 | 400 | 485 | 650 | 810 |
| 2 | » » | 14 | 428 | 535 | 650 | 850 | 1070 |
| 3 | Սուլֆատ ամոնիում | 20 | 300 | 375 | 450 | 600 | 750 |
| 4 | Ամոնյակային սելիտրա | 34 | 175 | 220 | 265 | 350 | 440 |
| 5 | » » | 35 | 170 | 215 | 260 | 340 | 430 |
| 6 | Լեյնասելիտրա | 25 | 240 | 300 | 360 | 480 | 600 |
| 7 | » » | 26 | 230 | 290 | 350 | 460 | 580 |

5. Ցրտահերկի և գարնանավարի ժամանակ մտցրած պարարտանյութերից բացի, լրացուցիչ տրվելիք պարարտանյութերը մտցնել վեգետացիայի ժամանակ նախապես կուլտիվատորով 13-15 սմ. խորությամբ հանված ակոսներում։

6. Քուսպի ալյուրը մտցնել հողի մեջ սուպերֆոսֆատի հետ խառնած՝ հաշվելով յուրաքանչյուր հեկտարին մեկ տոննա քուսպի ալյուր և 45 կիլո մաքուր ֆոսֆոր։

7. Կոշտացած պարարտանյութերը մինչև հողի մեջ մտցնելը մանրացնել և մաղել 3 միլիմետրանոց մաղով։

8. Պարարտանյութերը պետք է հողի մեջ մտցնել, որպես խառնուրդ։

ա) սուլֆատ ամոնիումը, կալիական նյութերը և քուսպի ալյուրը սուպերֆոսֆատի հետ կարելի է խառնել հողը մտցնելուց 10—15 օր առաջ։

բ) Ամոնյակային սելիտրան և լեյնսելիտրան սուպերֆոսֆատի



հետ խառնել հող մտցնելուց անմիջապես առաջ և իսկույն մտցնել հողը. խառնված վիճակում չպետք է պահել նույնիսկ մեկ օր։

9. Պարարտանյութերը դաշտում ցրել խնամքով և հավասար չափով։ Դրա համար դաշտը բաժանել հողակտորների յուրաքանչյուր 500 քառ. մետրից ոչ ավելի, յուրաքանչյուր հողակտորում մտցնել կշռած, կամ չափած քանակությամբ տրվելիք պարարտանյութերով։

10. Ավելացնել հանքային պարարտանյութերի և քուսպի ալյուրի չափերն այն կոլտնտեսությունների, բրիգադների և օղակների հողերի համար, որոնք պարտավորություն են վերցրել մեկ հեկտարից 30 և ավելի ցենտներ բերք տալու, սահմանելով դրանց հողերի համար մաքուր ազոտի դոզաներ 110—150 կիլոգրամ և համապատասխան քանակությամբ ֆոսֆոր։

11. Այն հողերը, վորոնց նախորդ կուլտուրան յեղել է առվույտը, առաջին տարին պարարտացնել միայն ֆոսֆորով։

12 Արգելվում է խիստ աղոտ (շորաքաթ) չլվացված հողերի պարարտացումը հանքային նյութերով, այդպիսին թույլատրվում է միայն լվանալուց հետո։

13. Հանքային պարարտանյութերի պլանները կազմել, դոզաները սահմանել հողերն ըստ խմբերի դասավորել ագրոնոմի և խիմիզատորի անմիջական ցուցմունքներով և ղեկավարությամբ։

14 Այն հողերում, վորտեղ տեղի կունենան բամբակի նոսրացում, արգելվում է ցանքից հետո լրացուցիչ ազոտային պարարտացումը։

## 15. ՏԵՂԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Բամբակի պարարտացման համար լիովին օգտագործել տեղական բոլոր տեսակի պարարտանյութերը՝ գոմաղբը, գիշերային վոսկի, առուների տիղմը, խառնաղբը, մոխիր, թռչունների կղկղանք և այլն,

2 Մոխիրը մտցնել հողի մեջ գոմաղբի հետ միասին։

3. Տեղական պարարտանյութերը մտցնել աշնանը կամ վաղ գարնանը խոր վարից առաջ։

4. Պարարտանյութերը դաշտ փոխադրելուց հետո ցրել և անմիջապես վարել։

Վարն ուշանալու դեպքում պարարտանյութերը դաշտում չցրել և պահպանել ամրացած կույտերով ծածկված 4-5 սանտ. հողի շերտով։

5. Հողի կազմվածքը բավարարելու համար առաջին հերթին պարարտացնել ֆիզիկական վատ հատկություն ունեցող, մասնավորապես բողահողերը։

6. Յուրաքանչյուր հեկտարին տալ ոչ պակաս 20 տոննա գոմաղբ, տորֆ 10 տոննա, կամ գիշերային փոսկու կոմպոստ 10 տոննա և կամ թռչունների կղկղանք մեկ ցենտներ։

## 16. ԱՇՆԱՆ-ՁՄԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

1. Ցրտահերկը ժամանակին կատարելու համար աշնանը (նոյեմբեր ամսում) բացված բամբակի հավաքն ավարտելուց հետո անմիջապես սկսել չբացված կնգուղների հավաքը, անգամ չեթե յուրաքանչյուր բույսի վրա կլինի 3-4 հատ չբացված կնգուղ։

2. Կնգուղները հավաքելուն զուգընթաց դաշտը մաքրել ցողուններից արմատներով և անմիջապես կատարել խոր վար առանց փոցխելու։

3. Վարից հետո հավաքել մոլախոտերը և բամբակենու ցողունների մնացորդները։

4, Վարի խորությունը դիֆերենցիացիայի յենթարկել, յելնելով հողային պայմաններից և ստորյերկրյա ջրերի բարձրությունից։

ա) «Արաքս» գետի յերկարությամբ ընկած այն հողերը, վորոնց ստորերկրյա ջրերը բարձր են գտնվում, վարը կատարել վոչ պակաս 22 սմ. խորությամբ, իսկ մնացած հողերի վարը կատարել 25-26 սմ. խորությամբ։

ա) հացահատիկային և այլ կուլտուրաներից ազատվող այն հողերը, վորոնք դրվելու յեն բամբակենու տակ, բերքահավաքից անմիջապես հետո կատարել խոզանավար և փոցխել, իսկ աշնանը, մինչև նոյեմբերի 15-ը վարել 2 րդ անգամ 25-26 սմ։ խորությամբ առանց փոցխելու։

գ) Հին առվույտների այն տարածությունները, վորոնք դրվելու յեն բամբակենու տակ, վարել աշնանը նախախոփիկներով։ Նախախոփիկների բացակայության դեպքում, վարից առաջ կատարել լուշչովկա ափսեյավոր փոցխերով կամ լուշչիլնիկներով։

2109
38



ՀՀ Ազգային գրադարան
NL0295519

Տիրաժ 200

Գլավլիտի Լիազոր Բ. № 215